Ավագանու որոշումներ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Օշական, (091)459463, (091)341124, oshakan.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 20

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածներով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. N286 որոշման 3 րդ կետի „ա" ենթակետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով.*
***Օշական համայնքի ավագանին որոշում է՝***

Համայնքային սեփականություն համարվ գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդ-վաճառքով օտարել հաստատել մեկնարկային գին՝

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը/ կադաստրային արժեքի % | սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | հողամաս | Օշական համայնք | 02-113-0272-0138 | 0,1522 | գյուղ. | արոտավայր | - | 100 | |
| 2 | հողամաս | Օշական համայնք | 02-113-0109-0021 | 0,3 | գյուղ. | արոտավայր | - | 100 | |
| 3 | հողամաս | Օշական համայնք | 02-113-0239-0099 | 0,2204 | գյուղ. | արոտավայր | - | 100 | |
| 4 | հողամաս | Օշական համայնք | 02-113-0109-0022 | 0,5 | գյուղ. | արոտավայր | - | 100 | |

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՄՀԱՍ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ

ՀՈՎՆԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՀԱՅԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԵԿՏՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Օշական, (091)459483, (091)341124, oshakan.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 19

## ՕՇԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով

***Օշական համայնքի ավագանին որոշում է***

Հաշվի առնելով ՀՀ-ում կորոնավիրուսի հետ կապված արտակարգ դրությունը, համայնքի մանկապարտեզների և մշակույթի պալատի խմբերի գործունեության դադարեցման հետևանքով ծնողական միջոցների չգանձվելու պատճառով համայնքի վարչական բյուջեի 2020թ եկամտային մասից,որպես տեղական վճար ծնողներից գանձվող, պակասեցնել 9300,0 հազար դրամ և դրա հետ կապված բյուջեի ծախսային մասից 09.01.01 խումբ ենթախմբից 4637 հոդվածից պակասեցնել 10600,0 հազ. դրամ և 08.04.01. խումբ ենթախմբից 4637 հոդվածից 700,0 հազ. դրամ:Համայնքի ոչ ասֆալտապատ փողոցները խճապատելու նպատակով անհրաժեշտ տրանսպորտային միջոցներ վարձակալելու համար վարչական բյուջեի 04.05.01 խումբ ենթախմբի 4216 հոդվածին ավելացնել 2000,0 հազ. դրամ: Կորոնավիրուսի հետ կապված համայնքում մեկուսացված անձանց հիգենայի պարագաներով և սննդամթերքով ապահովելու նպատակով համայնքի վարչական բյուջեի 05.01.01 խումբ-ենթախմբի 4267 հոդվածից 200,0 հազ. դրամ տեղափոխել 01.06.01 խումբ-ենթախմբի 4267 հոդվածին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ

ՀՈՎՆԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՀԱՅԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԵԿՏՈՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆ**